ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

<<ՇԻՐԱԿԻ Մ.ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ>>

ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Ենթակայի ուսուցումը միջին դպրոցում

Ուսուցչուհի՝ Սաթիկ Դիլանյան

(անուն, ազգանուն)

/Գառնառիճի միջնակարգ դպրոց/

Գյումրի 2023

Բովանդակություն

Ներածություն……..3

1.Ենթակայի ուսուցումը միջին դպրոցում…….……4

2.Ենթակայի ուսուցումը 8-րդ դասարանում……..9

Եզրակացություն…….…..……14

Օգտագործված գրականության ցանկ…….….15

Ներածություն

Արդիականությունը: 21-րդ դարում հանրակրթությունը նպատակ ունի ձևավորելու որոշակի կարողունակություններով զինված հայ քաղաքացի, որը պատրաստ է դիմագրավելու ցանկացած փոփոխության, քննական վերլուծության ենթարկելու իրադրությունը, մշակելու քայլեր, առաջարկելու փոփոխություններ, գործելու հանուն հանրության, հանուն իր երկրի բարօրության, պետականության ամրապնդման և բարգավաճման:

Շարահյուսություն, քերականության երկու հիմնական բաժիններից մեկն է, որն ուսումնասիրում է բառերի գործառական կիրառությունները, նրանց կապակցությունները, նախադասությունները, սրանց կառուցվածքային տիպերը և կապը միմյանց հետ: Շարահուսության հիմնական խնդիրը, այդպիսով, լեզվի շարահյուսական միավորների և դրանք պայմանավորող քերականական հարաբերությունների քննությունն է: Այդ միավորներն են՝ նախադասության անդամներն են բառակապակցությունները և նախադասությունները: Շարահյուսությունն ուսումնասիրելիս անհրաժեշտ է տեսական գիտելիքներն ամրապնդել գործնական առաջադրանքների միջոցով:

Շարահյուսական գիտելիքների ուսուցման ժամանակ հիմք է ծառայում աշակերտների նախորդ դասարաններից ձեռք բերած ձևաբանական գիտելիքները: Օրինակ նույն գոյականի, գոյականի հոլովների իմացությունը թույլ է տալիս, որ պատկերացում կազմեն նախադասության մեջ նույն բառերի շարահյուսական գործառույթների մասին: Երեխաները սովորելով գտնել նախադասության մեջ ենթական, առաջին ն ուշադրություն են դարձնում հոլովին, քանի որ ենթական դրվում է ուղղական հոլովով: Այս ամենի իմացությունը ավելի հեշտացնում նախադասության մեջ տարբերակել ենթական: Շատ կարևոր է շարահյուսական գիտելիքների ուսուցման ժամանակ կիրառվող հնարների և մեթոդների ճիշտ ընտրությունը: Աշխատանքի արդիականությունը պայմանավորված է ենթակայի ուսուցման առանձնահատկությունների ուսումնասիրության անհրաժեշտությամբ:

Աշխատանքի **նպատակն է** ուսումնասիրել և ներկայացնել ենթակայի ուսուցումը միջին դպրոցում:

Գլուխ 1-ին

Ենթակայի ուսուցումը միջին դպրոցում

Հայոց լեզվի դասավանդումը բացառիկ դեր ունի անհատի, պետականամետ հայ քաղաքացու արժեքային համակարգի, նրա բարոյական նկարագրի ձևավորման գործում: Հայոց լեզվի և գրականության դասավանդման ընթացքում մշակվում և ամրապնդվում է այն դիրքորոշումը, որ հայոց լեզուն՝ որպես ՀՀ պետական լեզու, անկախ պետականության պահպանման, զարգացման կարևորագույն երաշխիքն է, որը անփոխարինելի դեր ունի ինչպես հենց իր՝ սովորողի, այնպես էլ ողջ հայ ժողովրդի կյանքում: Սովորողը հայոց լեզվից, գրականությունից գիտելիք, որոշակի հմտություններ ձեռք բերելով հանդերձ՝ ուսումնասիրում է իր մայրենի լեզուն՝ որպես իր ինքնության բացահայտման և դրսևորման, որպես հաղորդակցման և համագործակցության, որպես այլ ոլորտներից գիտելիք ձեռք բերելու, օտար լեզու սովորելու անփոխարինելի միջոց:

Հայոց լեզվի, գրականության ուսումնասիրությունը ձևավորում է որոշակի վերաբերմունք և դիրքորոշում հայեցի ոգու, ազգային արմատների պահպանման և ամրապնդման համար, ինչպես նաև հնարավորություն է տալիս խորությամբ ընկալելու հայ մարդու արժեքային համակարգը, ժողովրդի կենցաղը, նիստուկացը, հավատալիքները, ավանդույթները, սովորույթները: Ազգային ոգին և մշակույթը արժևորելու, գնահատելու, պահպանելու, հաջորդ սերնդին փոխանցելու պատրաստակամությամբ և գործուն մասնակցությամբ դաստիարակվում է հայրենասեր, պետական մտածողություն ունեցող, օրինապահ, բարեկիրթ, ներդաշնակ զարգացած անձնավորություն, որը պատրաստ է սովորելու ողջ կյանքի ընթացքում:[1]

Հայոց լեզուն ուսումնական բոլոր ոլորտներից գիտելիք ձեռք բերելու միջոց է. հայոց լեզվի ուսումնասիրությունը հիմք է ստեղծում այլ առարկաներից գիտելիք ձեռք

[1] Հանրակրթության <<Մայրենի>>, <<Հայոց լեզու>> և <<Հայ գրականություն>> առարկաների փորձնական չափորոշիչ և ծրագրեր 1-12-րդ դասարաններ:

բերելու, վերառարկայական, ներառարկայական և միջառարկայական հետազոտական, նախագծային գործունեություն ծավալելու և դրանց արդյունքները փաստարկված խոսքով, նաև ժեստերի լեզվով հաղորդելու համար: Մայրենի լեզվի իմացությունը հնարավորություն է տալիս նաև սովորելու և հաղորդակցվելու օտար լեզուներով: Հայոց լեզվի ուսումնասիրության նպատակներից են ուսումնական այլ բնագավառներում տարբեր թեմաներով կապակցված խոսք կազմելու կարողության ձևավորումը և զարգացումը:[2]

Հանրակրթական դպրոցի հիմնական ծրագրի 7-9-րդ դասարաններում ուսումնասիրվում է հայոց լեզվի քերականությունը՝ ձևաբանություն և շարահյուսություն բաժիններով: Քերականության ուսուցումը չի հանգեցնում կանոնների, սահմանումների անգիր իմացության, լեզվաբանական տեղեկությունները նվազագույն չափով են: Շեշտադրվում է լեզվական միավորների հաղորդակցական և ոճական արժեքը:

Ծրագրային նյութի ուսուցման ընթացքում հաջորդական քայլերով կյանքի է կոչվում հիմնական նպատակներից մեկը՝ պատրաստել գրագետ հաղորդակցվող, բանավոր ու գրավոր տրամաբանված խոսք ունեցող անհատ, որն իր սեփական ջանքերով բացահայտում է գիտելիքը: Հայոց լեզվի ծրագրային նյութի ուսուցմանը զուգընթաց կարևորվում է հանրակրթության պետական չափորոշիչով նախանշված կարողունակությունների զարգացումը:[3]

Շարահյուսությունը քերականության բաժիններից մեկն է, որն ուսումնասիրում է բառակապակցությունն ու նախադասությունը, նրանց կառուցվածքը, տեսակները, ինչպես նաև կապակցության եղանակները:

Դպրոցական ծրագրով լեզվի այս բաժինը սկսում ենք ուսումնասիրել 8-րդ դասարանից, մինչ դեռ ձևաբանությունն ուսումնասիրելիս անհրաժեշտ են որոշակի գիտելիքներ շարահյուսությունից: Այդ գիտելիքները անհրաժեշտ է տալ աշակերտին հինգից վեցերորդ դասարանների մայրենիի դասընթացում՝ խոսքի զարգացման դասերին: Աշակերտը պետք է որոշակի գիտելիք ունենա գոյականական և բայական անդամի լրացումների մասին: Նա հստակ պետք է ճանաչի, կարողանա գտնել

[2] Մեյթիխանյան Փ., Հայոց լեզու, 7-րդ դասարանի դասագրքի մեթոդական ուղեցույց, Երևան 2023, էջ 19
[3] Գրիգորյան Լ., Զաքարյան Հ., Ավետիսյան Յու., Մկրտչյան Գ., Հայոց լեզու, 7-րդ դասարան, Մեթոդական ուղեցույց, Երևան 2023, էջ 8

որոշիչը, ուղիղ խնդիրը և նախադասության մնացած անդամները, քանի որ 7-րդ դասարանում ուսումնասիրում են գոյական, նրա հոլովները: Ուղղական հոլովն անցնելիս աշակերտը սովորում է, որ ուղղական հոլովով դրվում են ենթական, ստորոգելին, կոչականը, բացահայտիչը և գոյականական որոշիչը: Ուստի աշակերտը արդեն պետք է նախապես իմանա քերականական այդ միավորների մասին, որպեսզի ճանաչի ուղղական հոլովով դրված բառերը նախադասության մեջ:

Շարահյուսական մակարդակում նախադասության անդամները բաժանվում են 2 խմբի՝ գլխավոր և երկրորդական:

Գլխավորները նախադասության ստորոգումային անդամներն են՝ ենթական և ստորոգյալը, որոնք կազմում են նախադասության միջուկը:

Ենթական ու ստորոգյալը նախադասության գլխավոր անդամներ են: Նախ՝ ենթական, փիլիսոփայության «լեզվով» ասած, այն մատերիան է, որն ունի հատկանիշներ՝ փոփոխական և ոչ փոփոխական (կայուն): Ստորոգյալը նրա փոփոխական, «ընթացքային» հատկանիշն է: Իսկ սա նշանակում էր որ ենթական ու ստորոգյալն իրարից անբաժան են, հետևաբար հավասարապես գլխավոր են, մանավանդ նրանք քերականության մեջ հանդես են գալիս *համաձայնական կապակցությամբ*: Երկրորդ՝ ենթական համարելով ստորոգյալի լրացումը, հանիրավի «գերապատվությունը» տալիս ենք ստորոգյալին: Ասելով «ենթական ստորոգյալի լրացումն է»՝ նույն իրավունքով էլ կարելի է հակառակը պնդել, չէ՞ որ անձնական դերանուններով է պայմանավորված ստորոգյալի դեմքը (եթե, ասենք, գործածում ենք ես-ը, ապա ստորոգյալը պիտի գործածվի առաջին դեմքով, եզակի թվով...): Երրորդ՝ բոլոր երկրորդական անդամները լրացնում են թե՛ ենթակային (գոյականական անդամ), թե՛ ստորոգյալին (բայական անդամ), մի հանգամանք, որ վկայում է երկու գլխավոր անդամների հավասարազոր գոյությունը:[4]

Որոշ դասագրքերում ու ձեռնարկներում ենթական բնորոշվում է որպես նախադասության՝ մի բան անող կամ լինող գլխավոր անդամ, որին ստրոգումով վերագրվում է որևէ հատկանիշ: Այս սահմանման մեջ մի բան անող կամ լինող ձևակերպումը վերաբերում է միայն բայական-պարզ ստորոգյալ ունեցող ենթակային:

[4] https://elearning.armedu.am/mod/page/view.php?id=39151

Ճիշտ կլինի ենթական սահմանել այսպես՝ Ենթական նախադասության այն գլխավոր անդամն է, որի հետ կատարվում է ստորոգում, որին դիմավոր բայով վերագրվում է որևէ հատկանիշ՝ իբրև ստորոգյալ:[5]

Իր անունը թերևս ստացել է ստորոգյալին «ենթակա լինելու», այսինքն՝ նրա հետ համաձայնելու պատճառով: Չնայած այդպիսի «ենթակայությունը»՝ նա գործողության «տերն» է:[6]

Ենթական նախադասության այն գլխավոր անդամն է, որին դիմավոր բայով վերագրվում է որևէ հատկանիշ, գոյություն, վիճակ, գործողություն, այսինքն՝ որի հետ կատարվում է ստորոգում:

Հատկանիշ ասելով պետք է հասկանալ ինչպես ենթակայի ով կամ ինչ, ինչպիսին, քանիսը լինելը, այնպես էլ՝ գործողությունը որպես հատկանիշ:
Ենթական դրվում է ուղղական հոլովով, եզակի և հոգնակի թվերով, գոյականի որոշյալ և անորոշ առումներով և անձի դեպքում պատասխանում է ով, ովքեր, իրի դեպքում՝ ինչ, ինչեր հարցերին: Ենթականեները լինում են միակի և բազմակի:[7]

Ենթական պատասխանում է *ո՞վ, ովքե՞ր, ի՞նչ, ինչե՞ր* հարցերին: Հայերենում նախադասության ենթական արտահայտվում է՝

գոյականներով

Լռեց *ծերունին:* Հեռվում երևում էր *գյուղը: Ժողովուրդները* խաղաղություն են ուզում:

Ենթական կարող է լինել *մենանդամ* և *բաղադրյալ* (բազմանդամ): Բերված օրինակներում ենթական մենանդամ է:

Հարյուր զինվորը մեկ վաշտ է: *Տղաների մի մասը* գնաց արշավի: *Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը* հզոր է: *Հազար ինը հարյուր ութսուն թվականը* խաղաղության տարի է:

դերանուններով

Օրինակներ՝ *«Ես* սիրում եմ քո մեղավոր աչքերը մութ»: *Դու* պիտի ծաղկես,

---

[5] Պապոյան Ա., Բաղիկյան Խ., Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, ուսումնական ձեռնարկ, Երևան 2003, էջ 94
[6] https://hy.wikisource.org/
[7] Բաղիկյան Խ., Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսության տեսության և գործնական աշխատանքներ, ուսումնական ձեռնարկ, Երևան 2008, էջ 76:

երկի՛ր Հայաստան։ *Դա* երևում է պարզորոշ։ *Ո՞վ* է լսել այդ լուրը։ *Ոչ ոք* չի մոռացվել, *ոչինչ* չի մոռացվել։

Գոյականաբար գործածվող բառերով, որոնք կարող են լինել դերանուններ (*ինչը, որը, քանիսը, որերորդը, բոլորը, յուրաքանչյուրը, մեկը, ուրիշը...*), ածականներով (*մեծը, փոքրը, կարճը, երկարը...*), թվականներով (*տասը, հազարը, առաջինը, ութերորդը...*), անորոշ, հարակատար և ենթակայական դերբայներով (*վազելը, սովորելը, ներկվածը, սլատռվածը, երգողը, նստողը...*)։

Օրինակներ՝ *Մեկն* աշխատում է բոլորի համար, *բոլորը* մեկի։ *«Ինչը* կհաղթի կյանքում հերոսին»։ *Մեծերը* գնացին կինո, իսկ *փոքրերը* ՝ մանկապարտեզ։ *Երկուսը* մեծ է մեկից։ *Լռելը* համաձայնության նշան է։ *Կորածը* չգտնվեց։ *Երգողը* հիացրեց մեզ։

Հայտնի է, որ գոյականաբար կարող է գործածվել ամեն մի միավոր՝ հնչյունից մինչև բարդ նախադասություն։ Այս գործածությունը կոչվում է ինքնանվանողական փոփոխություն։ Ահա. *«Ի»—ն* ձայնավոր է (*ի հնչյունը*), *«Արագ»—ը* մակբայ է (*արագ բառը*), *«ես նկատեցի»-ն* պարզ նախադասություն է։

Ուսուման ընթացքում ենթական գոյականի հետ համեմատելիս, իբրև տարբերիչ հատկանիշ, պետք է նշել նաև այն, որ ենթակա շարահյուսական հասկացությունը գոյականի ձևաբանական հասկացության համեմատ ավելի ընդհանրական է, վերացարկված, քան գոյականը, որովհետև խոսքի մեջ ենթակայի գործառույթով գործածվում են ոչ միայն գոյականները, այլև որոշ դերանուններ, դերբայներ, ինչպես նաև գոյականաբար գործածվող ածականը, թվականը և այլն։ Հատկապես ենթակա շարահյուսական-վերացական հասկացությունն ընդգրկում է բոլոր այն բառերը, որոնց միջոցով խսքի մեջ արտահայտվող առարկային որևէ հատկանիշ է վերագրվում ստորոգյալի միջոցով՝ հաղորդակցման նպատակով մասնավորելով, առանձնացնելով իրականության համանման և տարբեր մյոս բոլոր առարկաներից և երևույթներից։ Ենթակայի վերաբերյալ աշակերտների բեռք բերած գիտելիքները խորացնելու, ամբողջացնելու, ինչպես նաև խոսքային տարբեր իրադրությունների, տարբեր կառուցվածքի և կազմության նախադասությունների մեջ գլխավոր անդամները որոշելու հմտություններն ու կարողություններն ամրակցելու նպատակով ուսուցման

դասը կարելի է այնպես կազմակերպել, որ աշակերտները ինքնուրույնաբար հանգեն համապատասխան, ցանկալի հետևությունների, ճիշտ հարցադրումների միջոցով որոշեն, հստակորեն բնութագրեն և, որ կարևոր է, էական հատկանիշներով տարբերակեն ձևաբանական և շարահյուսական հասկացությունները, կարողանան առանձնացնել նրանց ընդհանրական և տարբերիչ հատկանիշները՝ հիմք ընդունելով նախորդ դասարաններում խոսքի մասերի ուսուման ընթացքում ձեռք բերած իրենց գիտելիքները:

Նախադասության գլխավոր անդամների ուսուցման ընթացքում աշակերտների ինքնուրույնությունը դրսևորելու նպատակով համապատասխան իրադրություն ստեղծելու լավագույն միջոցներին են տրամաբանորեն ու քերականորեն ճիշտ կազմված հարցադրումները, որոնք մղում են աշակերտներին առաջադրվաշ հարցերի վերաբերյալ մտահանգումների, հարցերի պատասխանը որոնելու, լուծման հնարները կռահելու և գտնելու մտավոր գործունեության:

Գլուխ 2-րդ

Ենթակայի ուսուցումը 8-րդ դասարանում

Ուսուցման ողջ ընթացքում պետք է հետևողականորեն զարգացնել աշակերտների դիտողական, զննական կարողությունները, իսկ դրա համար պետք է օգտագործել գծապատկերներ, նկարներ, աղյուսակներ: Ահա այս խնդիրների տեսանկյունից մոտենալով մայրենի լեզվի ուսուցմանը՝ խիստ կարևորվում է դարձյալ ուսուցչի դերը:

Այժմ կներկայացնենք ըստ Բարսեղյան Հ., Մեյթիխանյան Փ., <<Հայոց լեզու 8>> դասագրքի ենթակայի ուսուցման օրինակ: Ենթակայի ուսուցման ժամանակի կարելի է կիրառել հետևյալ մեթոդները և հնարները՝ մտագրոհ, գաղափարների քարտեզ, T-աձև աղյուսակ, զրույց, քարտերով աշխատանք, խմբային աշխատանք, որոնք դասը կդարձնեն ավելի պարզ ու հետաքրքիր՝ հասանելի բոլորին: Մեթոդների կիրառումը կնպաստի դասի արդյունավետության բարձրացմանը:

ԴԱՍԱՐԱՆԸ՝ 8-րդ

ԱՌԱՐԿԱ՝ Հայոց լեզու

ԴԱՍԻ ԹԵՄԱՆ՝ Ենթակա, նրա արտահայտությունը[8]

ԴԱՍԻ ՏԻՊԸ՝ Նոր նյութի հաղորդման դաս

ԴԱՍԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 45 ՐՈՊԵ

ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

- ✓ Ճանաչի նախադասության գլխավոր և երկրորդական անդամները և ճիշտ կիրառի խոսքում:
- ✓ Իմանալ ենթակայի առանձնահատկությունները
- ✓ Ճանաչել գրավոր խոսքում

ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ՝

Գտնի նախադասության գլխավոր և երկրորդական անդամներ, որոշի տեսակը:

[8] Բարսեղյան Հ., Մեյթիխանյան Փ., Հայոց լեզու 8, Երևան 2017, էջ 78:

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՐԱԳԱՆԵՐ՝ դասագիրք, գրատախտակ, A 4 չափի թղթեր, քարտեր՝ առաջադրանքներով, T-աձև աղյուսակներով:

ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ՝ թեմային առնչվող պաստառներ

ՄԵԹՈԴՆԵՐ, ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԵՐ ԵՎ ԵՂԱՆԱԿՆԵՐ՝ ԽԻԿ համակարգ, մտագրոհ, գաղափարների քարտեզ, T-աձև աղյուսակ, զրույց, քարտերով աշխատանք, խմբային աշխատանք:

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ նախադասության գլխավոր անդամներ, ենթակա, ստորոգյալ, ենթակայի արտահայտությունը:

ԽԹԱՆՄԱՆ ՓՈՒԼ

Կիրառվում է մտագրոհի մեթոդը: Հարցեր է ուղղվում դասարանին «Նախադասության անդամներ» թեմայի շուրջ: Կազմում են գաղափարների քարտեզ անցած տարիներից ունեցած գիտելիքների հիման վրա:



Ուսուցիչը ներկայացնում է, որ նախադասության այն անդամը, որը մի բան է անում, լինում կամ դառնում, կոչվում է ենթակա: Դասագրքի միջից կարդալ բանաստեղծությունը և աշակերտների ուշադրությունը հրավիրել ընդգծված բառերի վրա:

Մասիսն ամպել է նորից,
Պսակը հին է,
Որդան կարմիրը վաղուց
Կրակի գին է:
Պսակը՝ հին, լեռը՝ հին,
Երազանքը՝ նոր,
Ախ, այդ որդան կարմիրից
Լիներ ինձ մի շոր:

Տրված բանաստեղծության մեջ ընդգծվածները ենթակա և ստորոգյալ է:

Իմաստի ընկալում

Բացատրել, որ ենթական դրվում է ուղղական հոլովով և պատասխանում է ով, ովքեր, ինչ, ինչեր հարցերին: Ենթական արտահայտվում է՝

1.Գոյականով, որըկարող է լինել անձ, իր, երևույթ, հասկացություն և այլն.

Հնձվորը ցերեկվա մարդն էր:

Վրնջում էին **ձիերը** մետաղաձայն և երկարաձոր:

2.Այն բոլոր դերանուններով, որոնք մատնացույց են անում անձ կամ իր.

Այնուհետև **մենք** էլ չէինք լսում նրա ձայնը:

3.Փոխանուն ածականով՝

Տասը երկուսի հնգապատիկն է:

4.Փոխանուն թվականով

5.Բայի անդեմ ձևերով՝ անորոշ, ենթակայական և հարակատար դերբայով:

Ա.անորոշ դերբայով՝

Գրելը քո գործը չէ, դու միայն աշխատիր:

Բ.փոխանուն ենթակայական դերբայով՝

Պտուղդ **քաղող** չկա, մասրենի, սարի մասրենի:

Գ.փոխանուն հարակատար դերբայով՝

Քնածը այդպես էլ չիմացավ մեր դուրս գալը:

6.Բառակապակցությամբ:

Սերը քանդելը եկեղեցի քանդելուց վատ է:

Դասարանը բաժանել խմբերի, տալ քարտեր, որոնք պարունակում են նախադասություններ: Հանձնարարել դուրս գրել ենթակաները: Այնուհետև առանձնացնել T- աձև աղյուսակով ենթական, դիմացը գրել ինչով է արտահայտված:

Ենթակա	Արտահայտվում է

Ամփոփում են կատարած աշխատանքը:

Զրույցի միջոցով ամփոփել նոր նյութի հաղորդումը:

Կատարել **առ. 43** էջ 79՝ Տրված հատվածից դուրս գրել ենթակաները և որոշել ինչով են նրանք արտահայտվել:

Կատարել առ. 45 էջ 80՝ ԿԱզմել նախադասություններ՝ հետևյալ բառերն ու բառակապակցությունները գործածելով որպես ենթակա.

Ավելի քան երկու հարյուր մարդ

Կարմիր

Իրենցից ոչ ոք

Թշնամանալ

Համբերել

Դաշտ ու այգի

Նետ ու աղեղ

Երթևեկ

Բարիք

Բազմաթիվ երկրպագուներ

Այգու ծառերը

Կշռադատում

Ամփոփել դասը, գնահատել ակտիվ աշակերտներին:

Հանձնարարել տնային աշխատանք, առ.47, 49 էջ 80:

Եզրակացություն

Այսպիսով, ամփոփելով թեման կարող ենք ասել, որ հայոց լեզուն ուսումնական բոլոր ոլորտներից գիտելիք ձեռք բերելու միջոց է. հայոց լեզվի ուսումնասիրությունը հիմք է ստեղծում այլ առարկաներից գիտելիք ձեռք բերելու, վերառարկայական, ներառարկայական և միջառարկայական հետազոտական, նախագծային գործունեություն ծավալելու և դրանց արդյունքները փաստարկված խոսքով, նաև ժեստերի լեզվով հաղորդելու համար: Մայրենի լեզվի իմացությունը հնարավորություն է տալիս նաև սովորելու և հաղորդակցվելու օտար լեզուներով: Հայոց լեզվի ուսումնասիրության նպատակներից են ուսումնական այլ բնագավառներում տարբեր թեմաներով կապակցված խոսք կազմելու կարողության ձևավորումը և զարգացումը:

Ուսումնական գործունեությունը հայոց լեզվից հիմնականում գործնական բնույթ ունի, կապված է աշակերտի կյանքի, տրամաբանության, քննադատական մտածողության, լեզվամտածողության զարգացման հետ, կազմակերպվում է միտք շարժող հարցադրումների, իրական հաղորդակցական պայմաններում գործունեություն ծավալելու հիման վրա, այսինքն՝ սովորողը լեզվաբանության օրենքները սեփական փորձով է փաստարկում, հետևաբար նաև յուրացնում: Ենթակայի ուսուցումը ևս գործնական ճանապարհով իրականացնելու դեպքում նյութը առավել լավ կյուրացվի աշակերտների կողմից: Տարբեր տեսակի վարժությունների կատարման արդյունքում տվյալ թեման ամրապնդվում է: Իսկ երբ աշակերտը ինքնուրույն է կարողանում գտնել լուծումներ ստեղծված իրավիճակներից, ստացված տեղեկությունները ավելի լավ են ամրապնդվում իրենց գիտակցության մեջ: Իսկ այս ամենը իրականացնելու համար գոյություն ունեն բազմաթիվ մեթոդներ և մեթոդական հնարներ, որոնց կիրառման արդյունավետությունը ապացուցված է:

Օգտագործված գրականության ցանկ

1. Բաղիկյան Խ., Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսության տեսության և գործնական աշխատանքներ, ուսումնական ձեռնարկ, Երևան 2008, էջ 76:
2. Բարսեղյան Հ., Մեյթիխանյան Փ., Հայոց լեզու 8, Երևան 2017, 160 էջ:
3. Գրիգորյան Լ., Զաքարյան Հ., Ավետիսյան Յու., Մկրտչյան Գ., Հայոց լեզու, 7-րդ դասարան, Մեթոդական ուղեցույց, Երևան 2023, 62 էջ:
4. Մեյթիխանյան Փ., Հայոց լեզու, 7-րդ դասարանի դասագրքի մեթոդական ուղեցույց, Երևան 2023, 117էջ:
5. Պապոյան Ա., Բաղիկյան Խ., Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, ուսումնական ձեռնարկ, Երևան 2003, 462 էջ:
6. Հանրակրթության <<Մայրենի>>, <<Հայոց լեզու>> և <<Հայ գրականություն>> առարկաների փորձնական չափորոշիչ և ծրագրեր 1-12-րդ դասարաններ:
7. https://hy.wikisource.org/
8. https://elearning.armedu.am/mod/page/view.php?id=39151